

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Մայիսի 22 և 23-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտում տեղի ունեցան գրական բանասիրական ընթերցումներ:

Ինստիտուտի գիրենկտոր, բանասիրական գիտությունների թեկնածու Գուրգեն Հովնանի ներածական խոսքից հետո՝ «Հայ ժողովրդական ունեցություն զարթոնքի արտացոլումը ժամանակակից վեպում» թեմայով զեկուցեց գիտ. աշխատող Զվարթ Ղուկասյանը: Բնութագրելով հայ գրողների վերջին շրջանի ստեղծագործությունները, զեկուցողը նշում է, որ վերջին տարիները, հատկապես պարտիայի XX համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում, հրապարակ էկան մեծ թվով վեպեր: Այդ վեպերից ավելի թան մեկ տասնյակը վերաբերում է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդի ապրած ողբերգությանը և ապա՝ Հոկտեմբերյան ուղեւորության շնորհիվ նրա փրկության և ազգային ու սոցիալական վերածննդի ժամանակաշրջանին: Նախքան Զարյանի «Պարոն Պետրոսն ու իր նախարարները», Գուրգեն Մահարու «Երիտասարդության սեմին», Աղավնու «Երեւոյ», Անահիտ Շահինյանի «Ծառավա» և Ռաֆայել Աթաբեկյանի «Զարթոնք» վեպերը բազմազան արտահայտչական միջոցներով պատկերում են համաշխարհային առաջին պատերազմի շրջանում հայ ժողովրդի ծանր վիճակը, ունեցություն արթնացման մասնայական բնութիւնը և սովետական կարգերի համար նրա պայթարի հերոսական դրվագները: Հեղինակները սիրով ու շնորհով նախագծել են ստեղծել մի շարք բուհականների և սպարտական երիտասարդների կերպարները և միաժամանակ մերկացրել ուժերը, մասնավորապես դաշնակցությանը:

Ինստիտուտի գիտ. աշխատող Սիլվա Բողուլյանը «20-ական թվականների հայ սատիրական մամուլը» թեմայով զեկուցեց մեջ նշեց, որ ծաղրի, սարկազմի միջոցով խաղաղանելու, թերությունները նշանակելու գեղարվեստական տրագիկոմի հայ ժողովրդի մոտ եղել է շատ վաղուց: Սատիրական թերթերի ու ամսագրերի հրատարակությունը, սակայն, նոր թափ է ստանում գարնակաշրջանի, երբ արտասահմանի հայկական գաղութներում և բուն Հայաստանում սկսում են հրատարակվել «Երեւոյ», «Հայկական Սինեմա», «Երեւոյ», «Երեւոյ», «Երեւոյ», «Երեւոյ» մոծակ», «Երեւոյ», «Երեւոյ» և բազմաթիվ այլ երգիծական պարբերականներ: Ոչընչաքանակ ծաղր հայ ժողովրդի ոխերիմ թշնամիների՝ հատկապես դաշնակցության, զանազան գույների ու երանդի եվրոպական «Հայաստան» գործիչների վերաբերյալ, ծաղր պորտաբույծի, կուլանանսային աշխատանքից խուսափողի, պետական միջոցները վատնողների, ծուլների ու անգործությանների հանդեպ, եւրոպ հումոր այս կամ այն մանր զանցանքներ թույլ տված աշխատողների վերաբերյալ — ահա այն թեմաների ամենակի էլ ոչ լրիվ թվարկումը, որոնց անդադարձել են 20-ական թվականների մեր երգիծաթերթերը:

Զեկուցումը հարուստ էր հետաքրքիր փաստական տվյալներով:

«Գրականության ու արվեստի թանգարանի նոր նյութերը» զեկուցումը, որը կարգաց բանասիրական գիտությունների թեկնածու Գրիգոր Ստեփանյանը, արժանացավ յոթների ուշադրությանը: Բացի գեղեցիկ միջոցով գրական թանգարանի ֆոնդերը հարստացնելուց, որի համար միայն վերջին տարում, ծախսվել է մինչև 60 հազար ռուբլի (հին դրամով), գրական թանգարանը տեղացիներից և սփյուռքահայերից՝ որպես նվիրատվություն, ստացել է բազմաթիվ արժեքավոր նյութեր, ձեռագրեր, նամակներ: Այդ եղանակով համարվել է Գրեքիկ Գեմիլյանի ֆոնդը, ստացվել են Մանուկ Աբեղյանի, «Հերմես» ապարանի տեր և «Պատանի» պարբերականի խմբագիր Սիսակ Նիկիկի անձնական արխիվները, որոնք պարունակում են խիստ արժեքավոր նյութեր: Նվեր է ստացվել Վահան Թոթովենցի 93 նամակներ, Իսահակյանի, Տերյանի, Երվանդադի նամակները և այլն: Գրական թանգարանին արժեքավոր փաստաթղթեր են նվիրաբերում սփյուռքահայության ներկայացուցիչները: Վերջերս Փարիզից ստացվեցին Կոմիտասի մինչև այժմ անհայտ նամակները, դերասանուհի Սիրանուշի արխիվը հարստացվեց նորանոր փաստաթղթերով, որ ուղարկել էին Ամերիկայում գտնվող նրա դստերը: Բուլղարիայից ստացվել է բանասեր Օնեիկ Քեչանի խիստ արժեքավոր արխիվը և այլն: Ընկ. Ստեփանյանի զեկուցումը վկայում էր այն մասին, որ գրականության և արվեստի թանգարանը գիտում է հետադարձ ամեն միջոցի՝ հայ մշակութային այլևայլ ներկայացուցիչների ժառանգությունը հավաքելու և պահպանելու համար:

Բանասիրական գիտությունների թեկնածու Արամ Ինճիկյանը զեկուցեց «Հայ նոր գրականության ձևավորման հարցի շուրջը» թեմայով: Ինչպես հայտնի է, հայ նոր գրականությունը, որպես այդպիսին, մինչև վերջերս ձևավորված էր համարվում 19-րդ դարի սկզբներից: Իր զեկուցման մեջ ընկ. Ինճիկյանը առաջ քաշեց այն պնդումը, թե հեղինակային գաղութի, ծրուսագեմի հայ-

կական միաբանության, Վենետիկի Միաբանության գործունեության մեջ հայ նոր գրականության սաղմերը հանգեցն են եկել նաև 18-րդ դարի կեսերին:

Գիտաշխատող Հակոբ Մարգարյանի զեկուցումը՝ «Տիգրան Կամսարականի գրական ժառանգությունը» վերնագրով, ցույց տվեց, որ բացի Քեոդիկում Կամսարականի հիշատակած իր հինգ կեղծանուններից («Անցորդ», «Շոգեգրիչ», «Հայկակ», «Փյունիկ» և «ՀՀ»), Տիգրան Կամսարականի իր երկարատև ստեղծագործական կյանքի ընթացքում օգտագործել է ևս 7 կեղծանուն («Օվթիգե», «Ասեղ», «Մուրադ», «Նետ», «Նեստոր», «Բ. Տեր-Ջաբարյան» և «Հ») որոնցով ստեղծագործել է իր ջրոնիկները, պատմվածքները, հոգևածները: Կամսարականի գրական ամբողջ ժառանգությունը այժմ անցնում է 130 անունից, այսինչ դեռ վերջերս ընթերցող և գիտական հասարակությանը հայտնի էին նրա՝ ընդամենը մի վեպն ու երեք պատմվածքները: Հասկանալի է, որ այս բոլորի հետևանքով՝ էլ ավելի է ամբողջանում ու պարզվում արևմտահայ ռեալիստի ստեղծագործական դիմանկարը:

Միջնադարյան մի նշանավոր տաղի հեղինակի հարցի շուրջը թեմայով, հաղորդում արեց բանասիրական գիտությունների թեկնածու Մայիս Ավդալբեկյանը: Նա թեև իր անունով էր դարձրել դեռ միջնադարից մեզ հասած և հետագայում բազմաթիվ տարբերակներ ու հրատարակություններ ունեցող «Ամեն առավոտ և լույս» գողտրիկ տաղը, որ բանասեր Ասատուր Մնացականյանը համարել է հայկական ժողովրդական ստեղծագործություն և որպես այդպիսին զետեղել «Հայկական ժողովրդական երգեր» խորագիրը կրող ժողովածուում: Զեկուցողը ցույց տվեց, որ վերոհիշյալ տաղը խստիվ արտահայտված անհատական ստեղծագործություն է և պատկանում է 16-րդ դարի հայ բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու գրչին:

Մ. ՇՏԻԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԲԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ 20-ԱՄՅԱԿՈՂ

Լրացավ ֆաշիստական Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի մղած հերոսամարտն ակազմելու քսանամյակը: Մեր ժողովրդի անսրինակ սխրագործությունները դարեդար կմնան անմոռաց: Սրբազան է մեր հայրենիքի անկախության և ազատության, ամբողջ աշխարհի մարդկության նրշանկության համար զոհված մարտիկների հիշատակը, որի հավերժացման էր նվիրված 1951 թ. հունիսի 19-ի ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի միացյալ գիտական սեմինար:

Սեմինար ներածական նստով բացեց Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի գիրնկտոր, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ծ. Պ. Աղայանը:

Նշելով մարդկության պատմության մեջ սովետական ժողովրդի մասսայական հերոսության, կայունության և արիության սրինակը, նա ընդգծեց, որ այդ պատերազմը սոցիալիստական հասարակության կենսականության, հզորության ամենամեծ փորձությունն էր: Մեր հերոս ժողովրդը հաջողաբար կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ չափախեց ֆաշիզմը և Եվրոպայի ժողովուրդներին փրկեց ստրկացումից: Հիտլերյան Գերմանիայի դեմ տարած Սովետական Միության հաղթանակի շնորհիվ մենուց առան սոցիալիստական նոր պետություններ, աշխարհի տարբեր մասերում փշրվեցին գաղութատիրության շղթաները և շատ ժողովուրդներ ոտքի ելան ու բռնեցին ազգային ինքնորոշության ու անկախության ուղին: Ներկայումս մեր ժողովուրդը զբաղված է խաղաղ աշխատանքով: Նա թուժել է պատերազմից ստացած իր վերքերը և հաղթարշավի ելել գեպի կոմունիզմի շողջոռուն գաղափները: Սոցիալիստական երկրների հետ միասին այժմ մեր պետությունը խաղաղության ամենահուսալի պատվարն է ամբողջ աշխարհում:

«ՍՄԿՊ»-ն Հայրենական Մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակների կազմակերպիչն էր: Նվիրված պատմական գիտությունների գրնկտոր Ա. Ն. Մնացականյանի զեկուցումը: Համաստակի շարադրելով հիտլերյան Գերմանիայի կողմից Սովետական Միության վրա ուխտագրծորեն հարակվելու պատմությունը, զեկուցողը նշեց, որ պատերազմը պատահական չէր: Այն կապիտալիզմի ծնունդն էր, համաշխարհային իմպերիալիզմի կողմից իրախուսված հակակոմունիստական քոլոր ուժերի պայքարն էր աշխարհում միակ սոցիալիստական երկրի դեմ: Զեկուցողը նշեց նաև, որ ղեկավարելով հիտլերյան Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի մղած պայքարը, կոմունիստական պարտիան սովետական ժողովրդին